ության նկատմամբ, նույն հասարակագրությունից  
այս տարի, շնորհիվ թերութերի ուժեղացման, ավելացան  
մի քանի առարկաներ: Այս տարի թերութերը՝ հասար-  
ակագրության և տեխնիքական, սկսում են յերկրորդ կուր-  
սերից: յերրորդ և չորրորդ կուրսերում ավելացված ե  
լենինիզմը, չորրորդում, բացի դրանից - քաղաքացնութեա-  
բունը հաշվում ե վորպես առանձին առարկա: Տեխ-  
նիքական թերման ուժեղացումն առայօն արտահայտ-  
մեց սրանով, վոր ֆիզիկայի դասերն ավելացան և գրեա-  
գությունը 14 տեխնիքակից փոխադրվեց 11 տեխնիքակի:

Առարկայական հանձնաժողովների նիստերում խոսու-  
թին միշտ այն մասին, թե ինչպես են դասատուններն անց-  
նում նյութը, մանավանդ գուգընթաց դասարաններում, վո-  
րոնց նկատմամբ պահանջվում ե նյութի համաձափ թա-  
փով անցնելը. դասատուններն իրարից շատ յետ կամ ա-  
ռաջ չպիտի լինելին: Բնության հարց դարձավ նաև այն  
թե վորչափ ցիկլի առարկաների մեջ կիրառվում ե համա-  
ձայնեցման սկզբունքը, վորոց դեպքերում աշխատում  
ելին նյութն այնպես դասավորել, վոր առարկաներն  
իրար ոժանդակեն, միևնույն նյութը չկրկնեն (որինակ  
1 կուրսերում՝ ֆիզիքական աշխարհագրության և թ-  
ագրիտության նկատմամբ): այդպիսով թերեւանում եր  
ուսանողի աշխատանքը, ավելի խոր ու լրիվ երկուրացման

Նյութը : Առարկաների համաձայնեցման հարցը ժերթական հարցերից մեկն է : Բանֆակի պայմանները դեռ այս քան կանոնավոր չեն . վոր այդ հարցին ավելի ուժեղ զարկ տրվեր : Դեռ անցյալից շատուշամ թերություններ կան . հազիկ մշակվեցին նորմալ ծրագրներ . վորովք սակայն դեռ ելի փոփոխություններ պիտի կրեն (վորոց առարկաներից ի հարկե) . դեռ շատ բան եպահանջում ուսումնական գործը նորմալ հունի մեջ զցելու համար : Համաձայնեցման փորձն սկսվեց : Հեղուսների և համարակադրական առարկային հանձնաժողովները համապես այդ հարցին յերկու միացյալ նիստ նվիրեցին . պարզվեց , վոր առաջին կուրսերում արդեն կալրիկ համաձայնեցում , մյուս կուրսերում ծրագրի վորոց մասերում , իսկ ամբողջապես համաձայնեցնելը դեռ դժվար է , ավելի ուժեղացնել յեղածը - հնարավոր ե հառաջիկա ուսումնական տարվա սկզբում այդ հարցը կորչի : Համեմայն դեպս . առարկայական հանձնաժողովները . ուսումնական մասի . ուսումնական բյուրոյի հետ միասին , այդ հարցով արդեն մի քանի տարի յեցաղած են . վորոց ցիկլերում . յեթե կատարվել են մինչև այօմ նույնի տեղափոխություններ - նկատի յե առնվել զան համաձայնեցման խորիրը : Այդ հարցը . ինչպես և ուրիշ շատ ծրագրային գարցեր կամ վաճ են Բանֆակի ուսումնական պայմանների հետ . դեռ շատ բան համանակավոր բնույթը ե կրում , վորովճետն Բանֆակը կազմակերպչական շրջանութեան գոտնվում :

Այս տարի ևս խոսվեց դասավանդման մեթոդ . ների մասին . անցյալ տարի այդ հարցի մասին շատ ե խոսվել . բայց վորոց առարկայական օրիկլերում այդ հարցը այս տարի ել նորից ե ծեծվել : Հուրց քննության

հարց դադարակ մանավանդ թյուրք բաժնի հասարակագիտության և խուրք լեզվի դասավանդությունը : Թերությունները պարզվում են նիստերում . հնարավոր յետք միջոցները ձեռք են առնվազում թե ուսումնական մասի կողմից . թե մանավանդ առարկայական հանձնաժողովների կողմից : Խոշոր թերություններ ունի համարակադրական դրամատուրգիան թյուրքից . թյուրք բաժնում , դասատուիթերի կողմերը դեռ անցյալ տարի շեշտվեցին , բայց դրույթը չը մնաց զույնը . այս տարի Բանֆակի ուսումնական մասն ավելի կորուկ դրեց հարցը . Թյուրքական բաժնի համարակադրական դրամատուրգիան իր այժմյան դրույթամբ վասակար արդյունքներ ե տալիս : Թյուրք լեզվի դասավանդությունը կաղում ե դասատուի . Բանֆակի պահանջներին անհամապատասխան լինելու պատճառով :

Սորից շեշտվեց դասախոսային ձեվի դասավանդման անպատականարությունը , անհարման գործնվեց զան ուժեթերատային սիստեմի ծայրահեղող ու տագործելու :

Բոլոր առարկայական հանձնաժողովները միաբերան դպում են վորպես հրատապ հարց Բանֆակի համար - Դալտոն պլանի . ավելի հեշտ , լաբորատոր ձեվի դասավանդման կիրառման անգրածեցությունը : Եթեր ե թուսաստանում հականուանք ե նկատվում Դալտոն պլանի դեմ , ավելի օրենք այս Դալտոն պլանի . վոր ծայրահեղողության ե հասցվում : Ի հարկե մեր Բանֆակը չի օրունում իսկական Դալտոն պլանի մասին . վորի համար պահանջում են թդեալական պայմաններ - մինչդեռ անհրաժեշտ մինիմալ պայմանները չունի վոր միայն մեր Բանֆակը . այլ և շատուշատ

ռուսական բանֆակներ: Մենք ավելի անսպասու պայմաններում ենք գտնվում: Մեր Բանֆակը մնադիր չէ խոսքերի շելեփից ընկնել, նա կ'աշխատի, յեթե ի հարկե տրվեն նրան մինիմալ պայմաններ, նիրառել լաբորատոր պլանը (կուզեր պավանեք Դալտոն պլան), այսինքն ամեն հնարավորությունը պիտի ստեղծվեն, վոր տեղացի նյութի յուրացումը, գործնականորեն անցնելը, թեթեվացնի ուսանողության աշխատանքը, այն ուսանողության, վոր հնարավորություն չունի տառը պառապելու: Խսկական Դալտոն պլանից մենք տեղու յենք, վորովետև չունենք գրականություն՝ ուսանողության ինքնուրուց աշխատանքների համար, մեկ ձեռնարկով նյութի անցնելը, յեկուզ ինքնուրուց, դա Դալտոն պլան չե, - այլ լաբորատոր պլան, բայց մենք շատ դեպքերում այդ հնարավորությունն եւ չունենք, վորովետև չկան Բանֆակի ուսանողության համար համապատասխան դասագրքեր, ձեռնարկներ:

Համենայն դեպս լաբորատոր դասավանդման մի քանի փորձեր յեղան. մեկ փորձնական դաս հայոց լեզվից, մի բանի փորձնական դասեր բիոլոգիայից, արդյունքները վատ չեն, գունե ծրագրած նյութը տես դասարանումն եւ յուրացրին, ի հարկե բացեր եւ կային, - ուսանողներից վորմանք դասարանային պայմաններում չեյին կարողանում կենորունացնել իրենց մոլքերը (դրա պատճառը վորոց չափով դասարանի փոքր լինելն ե, ուսանողության բազմամարդությունը, ժամերի պակասությունը, նաև դասագրքերի պակասությունը). Վորմաց ասելով - ավելի լավ ե դասատուի կենդանի խոսքը լսել: Ի հարկե մի քանի փորձնական դասերից դեռ դժմար ե յեզրակացություններ հանել, բայց մի քան պարզ ե, այդպես են կարելում բոլոր առարկայական հանձնաժողովները, վոր մեր ուսանողության

համար ապագայում կիրառվելիք լաբորատոր պլանի մասնակ, անպայման վորոց տեղ պիտի տրվի նաև դասատորի կենդանի խոսքին:

Մեկ հիմնական դասավանդման մեթոդի կիրառումը Բանֆակի հերթական գարցն ե: Բանֆակն անպայման պիտի անցնի կարիսետային պարապմունքների, սրա հետ, ի հարկե կապված ե դասասենյակների քանակի գարցը, իսկ յեթե Բանֆակն ունենա իր շենքը, իր դասարանները, վորից նա կ'ոգուվի և ցերեկը և յերեկոները ու հնարավորություններուն կունենա իր միջոցներով կահավորել առարկայական կարիսետները - առաջ այդ դեպքում կ'մոտենանք լաբորատոր ձեվին, յեթե հրատարակեն անհրաժեշտ ուսանդակներ, դասագրքեր - ավելի ևս կ'բարերանա ուղևորման գործը:

Բանֆակին ի հարկե ըր վիճակի մի անգամից այդքուր ցանկությունների իրագործմանն հասնել: Համեմայն դեպս մենք տարեց տարի այդ ուղղությամբ պիտի զարգացնենք ուսումնական գործը: Հաջորդ տարվա համար ծրագրվեց հասարակագիտական - աշխարհագրական կարիսետի կազմակերպությունը:

Առարկայական հանձնաժողովներում շատ խոսվեց այն մասին, թե վորոց առարկաների դասերի թվի կը ճշգրիտումը վատ աշդրադարձ ծրագրի ծավալի վրա: Կրթատումներ ի հարկե անհրաժեշտ են, ուսանողը շատ ե ճանրաբեռնված, բայց գունե այօթ, յերբ Բանֆակի ուսման ընթացքը դեռ նորմայի մեջ չե, դասերի թվի կը ճշգրիտումները վատ հետեւանք են ունենում: Շատ երես գանցատվում մանավանդ մաթեմատիկոսները և արդարագի յեն: Դեռ մինչև հրիմ չի հաջողվում լրիկ չափով անցնել ծրագրի ամբողջ նյութը և ըորորու

Կուրսերն ավարտում են թերի գրտելիքներով։ Ամեն տարի  
Եւ հարց Ե բարձրացվել ընդունելու թյան պահանջների  
ուժեղացմ մասին, սակայն այդ ուղղությամբ դեռ խո-  
շոր քայլեր չեն արված։ Յեկ ամեն անգամ մեր առաջին  
կուրսերի մաթեմատիքական գիտելիքներն անմիտթար դը-  
րության մեջ են։ Դասատուն յեթ ընկնի երազի լրիվ կի-  
րառման յետեվից՝ ուսանողության վորակն եիզնում, յե-  
թե դանդաղ Ե անցնում՝ աշխատելով խորացնել առար-  
կան, վոր նույսին թվարանությունը լավ ուժքունեն, օր-  
րագրի ամբողջությունն Ե տուծում։ Ահա այս հանգամանք-  
ներն ենին, վոր վերջին յերկու տարիներ դրդեցին կորով  
կերպով դնել Բանֆակի դասընթացքը մեկ տարով ավե-  
լացնելու անհրաժեշտությունը։ Յերբ փորձեցինք այս  
ուսումնական տարում ընդունվողներին քիչ բարձր պա-  
հանջներ առաջարկեց՝ ցավակի արդյունքներ ստացանք։  
Բարեբախտաբար հաջորդ ուսումնական տարվա գործը  
կ'թեթեվանա մի նոր նվաճման շնորհիվ։ Արդեն վորու-  
զած է, վոր Բանֆակը նախապատշատական կուրս ունենա-  
ի հարկե դա ծամանակավոր միջոց կ'լինի, մինչև վոր ա-  
պագայում Բանֆակի առաջին կուրսի համար ավելի պատ-  
րաստ ուժեր գան։

Նախապատրաստական կուրսը կ'թեթեվացնի մի  
շաբաթ առարկաների ճանրաբեռնվածությունը, ծրագրա-  
յին նյութը կ'րաշխայի հինգ տարվա մեջ և այդպիսով  
կարիք չի լինի դասերի թվի ավելացման։ Ի հարկե գործը  
նորմալ կ'գնա այն ուսանողության համար, վորը հա-  
ջորդ տարվանից կ'մտնի Բանֆակ։ Ուրեմն այդ խոշոր  
հարցը, վորի մասին այնքան շատ խոսվել եր առարկա-  
յական հանձնաժողովների նիստերում՝ արդեն լուծված  
կարելի յէ համարել։

Յանկալի չեր, վոր անցած ուսումնական տարում  
կրօնական նկարչությունը։ Նկարչության պահանջն ըգ-  
գացվում Ե շատ առարկաների կողմից, ինչպես որինակ  
մաթեմատիկայի, ֆիզիկայի, քիմիայի, բնագիտության,  
աշխարհագրության և այլն։ Յերեսն մի հասարակութա-  
գրամ դժմարանում են գծել, վորանք եւ գոաները չեն  
կարող տարբերել։ Յեթե անցյալներում ուսանողու-  
թյան համար տաղակորեն եր անցնում նկարչությունը,  
վորոց չափով գրա պատճառը լավ մողելների պա-  
կասությունն եր. իսկ մյուս կողմից մի տարորինակ  
հեգնական վերաբերմունք դեպի զվարճություն-նկարչու-  
թյունը, վորի գնաճատականը չի ազգում նրանց ընդհա-  
նուր գնաճատության վրա։ այդպես եյին մուածում  
ուսումներից շատ շատերը, ճիշտ այն տեսակետը, ինչ  
վոր նկատում Են գպրոցականի մոտ։ Ի հարկե լինում  
եյին դեպքեր, յերբ դասերից խուսափում եյին։ Այս  
տարի դրությունը լավացավ. գնվեցին բավականաչափ  
լավ մողելներ, վերաբերմունքը քիչ լրջացավ. բոլորն Ե  
ունեն նկարչական հատուկ տեսորեր։ միայն դեռ Եին  
կան առանձին անհատներ, վորոնք մեկ-մեկ "գլխացավ"  
բոլորովին անտեղի մեջտեղ բերելով, ցանկանում եյին  
խուսափել նկարչությունից, վոր այնքան անհրաժեշտ Ե  
թե ապագայի աշխատանքի համար և թե գեղարվեստա-  
կան ճաշակը զարգացնելու համար։ Լավ չեր. վոր նըկար-  
չությունը հանվեց յերկրորդ կուրսից, բայց դրությունը  
կ'լավանա, յօթե նկարչությունն սկսենք նախապատ-  
րաստական կուրսից։

Այս ուսումնական տարում ճագարային նյութն ըստ  
առարկաների այսպես բաշխվեց.

Հայոց լեզու. 1 նուրս. Կյուղը և քաղաքը գրականության  
մեջ. 1 եզու.

- II Կուրու - Կույսի (ավելի խորացրած) : Հեզու :
- III " - Գրականության պատմություն . բանահյուսության պատմություն : Հեզու :
- IV " - Արևմտահայ և ուսուածայ գրականություն (քաղաքագիրներ)

Մուսաց լեզու . - Այս տարի ուսուած լեզուն ավելի նպաստավար պայմանների մեջ եր , բազականաչափ ավելացրած եր դասերի թիւը : Սակայն յաւրաքանչյուր կուրու են բաժանվում եր յերկու խմբի - թույլերի և ուժեղների : Այդ բաժանումը կ'ընթանա այն կեպքում , յեթե սկզբից ընդունեն ուսուերենից համաչափ գիտողները : Մուսաց լեզուի բարձրացման ամենաեյական միջոցն ե - նոր մրոնուների նկատմամբ ավելի խստացնել ուսուած լեզուի պահանջները . այնինչ գալիք են բուլորապին ուսուերեն շքիցողներ , այդպիսիներին հրմարեցնը բուլորուպին ընպիտի գործուղեն : Մյուս կողմից ել համապատասխան գասագքերի բացակայությունն ե խանգարում . այս տարի չորրորդ կուրուի ծրագրու ժամանակավորապես միքից շեշշեց իր նորմալ հուսից , մինչև վոր տարվա վերջը հօնարակությունը յեզակ ձեռք բերել անհրաժեշտ գրականությունը : Յեղած դասագրքերն անգամապատասխան են մեր Բանահյուսությունը . չի կարող բավարարվել յերեխաների համար գրված հոդվածներով :

Մատեմատիկա . - I Կուրու . անցնում են թվաբառություն . ընդհանուր տեղեկություններ հայրագաւառից . զբնական յերկրաչափություն :

II Կ. հանրագաղիկ մինչև մեկ անհայտով 10 հաւասարություն (ներառյալ ) Յերկրաչափություն - մինչև

գույքահեռագրիներ և սեղանանման :

III Կուրու . Հանրահայրկ մինչև առաջն աստրուանք ֆավասարությունների սրտեթյուն : Յերկրաչափություն մինչև բազասանչունների նմանություն :

IV Կուրու . Ֆանրագաշրկ մինչև անորոշ հակասարությունների առաջիկ աստիճանի : Յերկրաչափություն մինչև գնդի մակարդակը և ծագակի չափումը : Յեղած կուրունաչափություն :

Այս տարվա դասերի կրթատման պատճառով և մյուս կողմից ել մասնավանդ մեկ ամսով ուշ սկսելով լըսա ուսուություն չտվեցին ծրագրու լրիւ անցնելու . իսկ չորրորդ կուրություն բոլորուն չեն անցել յեղանկու չափություն :

Ֆիզիկա . II Կուրու . Տարրական մեքանիկա . հեղուկ ներկ գազեր , ջերմություն :

III Կուրու . Ստատիքական Ելեկտրականություն . Ելեկտրոնմագնետիզմ :

IV Կուրու . Ելեկտրականություն . ձայն . լուս . մերժականիկա :

Ֆիզիքայի դրությունը լավացավ . դասերն զգաւի չափով ավելացան . մանավանդ յերկրորդ կուրություն , այն պես վոր վորոց հնարավորություն ստեղծեց նույնիսկ գործնական աշխատանքներ կազմակերպել : Յեթե մեկ ամսվա ուշ սկսելը ընկներ բոլոր կուրություններ կուրու լիր կարելի յեր անցնել :

Հասարակագիտություն . Անցնում են .

I Կուրու - Քաղաքագիտություն

II " - Դասակարգագիտ . պայքարի պատմության և տնտեսական ֆազերի զարգացում (մինչև ֆեոդալիզմ ներառյալ ) .

III Կուրս. Դասակարգային պայքարի պատմություն  
(մինչև Երեկոնքորիա - Բարուվիզմ):

- Հեռինիզմ:

IV Կուրս. Դասակարգային պայքարի պատմություն  
մինչև Դառւենի ծրագիրը:

- Քաղաքատնտեսություն

- Հեռինիզմ (միայն Հանֆակում):

Ծրագրի նորման այս տարի համարյա լրիվ անցած  
ե միայն առաջին կուրսերում: Յեկող տարի ծրագրայրը  
նյութը կ'բաշխվի հինգ տարվա մեջ և այդ դեպքում  
բոլոր կուրսերի նկատմամբ ծրագրային նորման լրիվ  
կ'կիրառվի: Յեթ այս տարվա Բանֆակի ապահետրից  
ձեռնարկները (Դասակարգային պայքարի պատմու-  
թյունից) չլինելին, ավելի քիչ ծավալով կանցնելին  
նյութը: Ձեռնարկները թեթեվացրին ուսանողի ա-  
խատանքը:

Բնագիտություն - I Կուրս. Անկենդան բնություն

II Կուրս - Մարդու և բույսի ֆիզիոլոգիան

III " - Կենդանաբանություն. ընդհանուր գր-  
ժերով բուսաբանություն:

IV " - Ըստհանուր Բիոլոգիա, Եվոլուցիոն թեո-

II և III կուրսերի Դասերի կրօնումը մի կողմից.  
Այօս կողմից եւ մեկ ամիս ուշ սկսելը զգալիորեն անդ-  
րագարձավ նյութի ծավալի վրա, մասնաւու յերկրորդ  
և յերրորդ կուրսերի, զորոնց ծրագիրը բավական մեծ  
է: Առանց խախտելու ծրագրի ամբողջությունը՝ ար-  
գեցին ժամանակավոր կրօնումներ II, III և IV կուր-  
սերի նկատմամբ: Կրօնում փաստերի, որինակնե-  
րի բանակը կամ վորոշ զլուխներ տեղափոխվեցին  
գետագա տարիների համար, որինակ՝ սեռական գոր-

ճարաններ մարդու և բույսի չանցան, վորովհետեւ ըոր-  
րորդ կուրսի ծրագրում կա գլուխ սեռական բազմացման  
մասին, վորոշ հարցեր եւ անցան բնագրտական խմբակում  
(որինակ՝ գորմոններ, անաբիոզ): Յեթե դասերի թիվը վերա-  
կանգնվի և սորմալ ժամանակին սկսվեն պարապմունքները  
- ծրագիրը լրիվ կարելի յե անցնել: Յերրորդ և չորրորդ  
(մասամբ) կուրսերի շյութի վերաբերմամբ կան ձեռնարկ-  
ներ: Հաջորդ տարի, առաջին կուրսի շյութը կտեղափոխ-  
վի նախապատրաստական, ինչ մյուս շատ ժանրաբեռնված  
կուրսերը կ'թեթեվացվեն:

Քիմիա. Քիմիան անցնում են յերկու տարի, յերկրորդ  
և յերրորդ կուրսերում: Դա ի արկե քիչ ե, անպայման մեկ  
տարի ել հարկավոր ե, յեթ նկատի առնենք քիմիայի խո-  
շոր նշանակությունը մեր կյանքում և նրա ապագայում  
կատարելիք մեծ դերը: Լրիվ, առանց կրօնումների  
կուրսն անցնել հարավոր չի: Որգանական քիմիան (թ-  
կուզ ընդհանուր գծերով) չի անցվում: Անդրաժեշտ ե  
քիմիան մոցներ հետ առաջին կուրսից:

Գծագրություն. Անցնում են յերկրորդ և յերրորդ  
տեխնիքակներում, անցյալ տարի յերրորդ և չորրորդ: Տեղա-  
փոխությունը կատարվեց սրա շնորհիվ. Վոր չորրորդ կուր-  
սերը շատ են ժանրաբեռնված. Զամենայն դեպի անցյալ  
տարվա դասավորությունը ավելի նպատակահարմար է,  
չորրորդ կուրսերն ավելի լուրջ աշխատանքներ կ'կար-  
ուանական կատարել. մինչդեռ յերկրորդ կուրսի համար  
գծագրությունը դեռ վաղ է: Առարկայի համար այս տար-  
վա պայմանները շատ նպաստավոր են. Կա հատուկ սեռ-  
յակ, վորտեղ ուսանողները կարող են գծել. Սեռյակների  
պակասության պատճառով գծագրության ժամերը, մա-  
սնավանդ. III տեխնիքակները գիշեւ, հնարավոր յեղակ անցնել

- 52 -

ծրագրի կեսը՝ լրիվ անցնելու համար չարկավոր և կժամ.  
յուրաքանչյուր ուսանող յերկրորդ կրտսերթակում տպել է  
2-3 թերթ գեղագրեր.

Նկարչություն. Իօքանտաբար միայն առաջին կոր-  
սերումն է, անցյալ տարի կար և յերկրորդում, ջանեցին  
բուլորովին ի զուր : Հաջորդ տարի Կ'վերականգնվի դատ-  
րի նորմալ թիվը, յեթե նախապատրաստականութն ել հա-  
զողվի անցկացնել նկարչություն : Առարկայի դասավանդ-  
ման պայմաններն անցյալ տարիների գետ գամեմանած  
շատ ավելի լավ են . Ճեղք են բերված բավականակա-  
զիպսի մոդելներ, վորոնց ավելի յեն աշխուժացում  
դատրո: Վոչ մի դեպքում չպիտի մուտքել նկարչության  
վերացման մասին, այլ ընդհակառակո ցանկալի յե նրա  
ուժեղացումը:

Առարկայական հանձնաժողովները ուղղվել են

1. Հայոց լեզվի	8 նիստ	Այս յերեք առարկան յական հանձնաժողովներուն ունեցել են յերկու միացյալ նիստ:
2. Ռուսաց " "	2 " "	
3. Հասարակագրութեան	2 " "	
4. Ֆիզիկո-մաթեմատիկական	5 " "	
5. Բնագիտա-աշխարհագր.	10 "	

Հայաստն 39

2 vñus

Պյուրք սեկցիա

## Հաճախել են սիստերը

1.	84 %	դասաւուչեր,	65 %	ուսանողներ
2.	61 %	"	50 %	"
3.	60 %	"	28 %	"
4.	74 %	"	55 %	"
5.	78 %	"	41 %	"

Քոչար, Ես այս բոլոր հարցերը, վորոնք առաջադրու-

ԿԵՆ ԵՆ ԱՆՍՈՒԲԻՇՎԱԿԱՆ ԲՅՈՒՐՈՒԹԻ ԿՈՂՄԻՑ, ՆԱԿ ԳԵՄԵՎԵԼ  
ԴԱՍԱՄՈՒՆԵՐԻ ԸՆԹԱցիԿ Աշխատանքին:

Մինչև 1925-26. ուս. տարի, ինչպես յերեվում ենթի  
արձանագրություններից յեղել են 8 առ. Տականաժողովներ,  
վորոնք սակայն Գաճախ ունեցել են խառն նիստեր : Բնոշ-  
սենը յեղել են 22 նիստեր, քննվել են 46 հարց, բայց թե  
ինչ հարցեր են շոշափվել, գուշ տեղեկագրերից վուշնչ  
հայտնի չեն :

Աւումնական բյուրոյի աշխատանքը.

Բանֆակի ուսումնական մասն ավելի զարկ տվեց ու ուսումնական բյուրոյի այս տարվա գործունեյության։ Ասուն սական բյուրոն կազմված է առարկայական հանձնաժողով-ների նախագահներից ու քարտուղարներից, և ուսումնական մասի վարիչից, վորը և նախագահութ է։

Ասումական բյուրոն այն աշխատանոցն է, վորտեղ  
մշակվում են հարցեր - առարկայական հանձնաժողովների  
աշխատանքների համար : Այստեղ եյին ծագում ՄԻՌ շարք  
ուսումնարժեք հարցեր, վորոշ բազմակողմանի ժանութեամ-  
նը կատարվում եր առարկայական հանձնաժողովներում,  
ապա ի կատար աճվում ուսումնական մասի միջնորդու-  
թյամբ վարչության կողմից : Կորու հարցեր լրիվ լուծում  
եյին ստանում բյուրոյում, ապա քննության առավում ա-  
ռարկայական հանձնաժողովներում, վորոշ յերբեմն իրենց  
լրացումներով, ուսումնական մասի համաձայնությամբ,  
նոր բնույթ եյին տալիս հարցին :

Ուսումնական թյուրոյում պարզվում է բոլոր առար-  
կայական գաղափածողութերի աշխատանքը : Բոլոր ծրա-  
դրային դժվարությունները, ուսանողության և դասա-  
սունների միջև ծագած անախորժությունները, դասատու-

սերի դրական և բացասական կողմերը - բյուրոյի քննության առարկան եյին դատում: Առարկայական հանձնաժողովների նախագահները գեկուցում եյին նաև հաճախա դատերի մասին:

Ուսումնական բյուրոն շատ հարցեր ե առաջա լրել, այս բոլորն այս տարի կրրանելու հարավորություն չեղավ:

Յեղել ե չորս սրստ:

Հնակել են տետեվյալ հարցերը.

1. Գեկուցումներ առարկայական հանձնաժողովների նախագահների առարկաների դասավանդման, ուսումնական պայմանների, դասատուների դրական և բացասական կողմերի մասին:

2. Միջադեպեր ուսանողության և դասատուների

3. Ուսանողության և դասատուների վերաբերմունքը ուսման գործին (բացակայությունների և ուշացումների մասին):

4. Գրադարանային կոնսուլտացիա - գրադարանին կից գործող հատուկ հանձնաժողով՝ գրադարանի աշխատավոր, ընթերցման ղեկավարությունը կատունակորելու համար: Դասատուների ըստ մասնագիտության հերթական գրուցներ գրականության մասին:

5. Ընդհանուր գեկուցումներ ուսանողության և բանվորության համար:

6. Նախապատրաստական կուրսի աշխատեցությունը և նրա ուսումնական պլանը:

7. Հաջորդ տարվա ուսումնական պլանը. անելիքները:

8. Լաբորատոր մեթոդով տարած փորձնագան դասերի մասին:

9. Կոնսպեկտների հրատարակություն:

10. Գործնական աշխատանքներ.

11. Եքսկուրսիաներ.

12. Ուսումնական գումարների բաշխումն և ձեռքբերվելով ուսումնական առթիվ:

13. Բանֆակի չնգամյակին նվիրված տեղեկագրի մասին:

14. Գրավոր աշխատանքների մասին (վորոշված եր. վոր բոլոր առարկաներից տարվա ընթացքում լինեն յերկու գործներ, ու արկել ե ուսանողության գրագիտության բարձ բացման սպատակով):

Վերոհիշյալ բոլոր հարցերը դրվել են նաև առարկայական հանձնաժողովների քննության, այս այս կամ այս լրացումներով, փոփոխություններով. ուսումնական մասին կողմից հաստատվել են, հաստատել ե նաև Բանֆակի վարչությունը:

### Դաստուները և Երանց վերաբերմունքը գործից

Վերջին յերեք տարվա ընթացքում, յերբ համեմատաբար ավելի կանոնակորվեցին Բանֆակի ուսումնական պայմանները, պարզ ե, ավելի և լուրջ ուշադրություն դարձեց ուսուցչական կազմի վրա: Բանֆակում հավաքած են ճնշող մեծամասնությամբ Յերեվանի աջի ընկնող դասատուները՝ թե իրենց յերկարամյա ստաժով և թե մանկավարժական փորձառությամբ: Դասատուների վերաբերմունքը դեպի Բանֆակը - լավ ե, անհարազատ տարր, այսինքն այնպիսի դասատուներ, վորոնք ճարա հատած, պյութականով տարկած և առանց վոգեվորության տանելիքն աշխատանքը - , բացի մեկույթիուսից. չկա: Այս տարի ամեն կերպ կ'աշխատենք ազատվել այս հազարյունություններից. վորոնք անտարբեր են յեղեւ իրենց

պարտագանություններին : Յեթև սկասի չառսենք մի քայլ  
այսուհետեւ, բայց ճազբագլուտ դեպքերն անցյալում գունէ  
անցած ուսումնական տարում ուսանողության և դասա-  
տուսերի փոխարարերության նկատմամբ աջքի ընկ-  
սու անցարթություններ չեն յեղեւ : Յեթև վորու եւ արքա-  
կականության յեղեւ Ե-Դաւուարերում եւ լոկ ԱԵՐՈՒԱԿԱՆ  
հարցին . բայց որանք ճազբություն որինակներ են, սակայն  
յեղեւ եւ և այսուետեւ այդ գողմը պիտի հարթվի : Եաւ  
անմիակար եր թյուրք բաժնի ուսուցչական կազմի վորակն  
անցյալությում . իսկ այս ուսումնական տարում միայն յեր-  
կու դասատուներ դեռ ևս չեն կարող բավարարել : Այս  
ժակին : Յերկուսն եւ ուղարկված եյին սզգային Փոքրանա-  
կության կողմից . մեկը շատ յերիտասարդ եւ շրան դժվար  
ե հարմարվել Բանքակի աշխատանքին . Բանքան ու առ-  
նոշության , մյուսը թե՛կ միքանի տարվա փորձառություն  
ուսի , բայց Բանքակի համար անպատրաստ դասատու յե-  
նույնիկ իր մասնագիտությունն - հասարակագիտության  
կը լավ չի տիրապետում : Յեթև այդ յերկու անպատրաստ  
նաև դասատուներն եւ փուստրնվեցին - այդ դեպքում  
թյուրք բաժնն եւ դասատուների կողմից կմուտեն սոր-  
ման որության :

Բանքակը դեռ այսպիսի պայմաններում չի գտնվուի,  
վոր բոլոր դասատուները մեկ, հրմական մեթոդով առաջ-  
նորութեն : Ի հարկեւ ամենալավ մեթոդն եւ Լաբորատոր ձեզը.  
բոլոր գիշային հանձնաժողովներն եւ այդ շեշտեցին . բայց  
թութիւն միա մեթոդ կիրառելը - անպատակ և վասակար  
բան եւ, դեռ մենք շատ և շատ դժվարությունների համ-  
դեպ ենք կանգնած : Նաև և առաջ հարկավոր եւ առար-  
կայական կարինետներ . հատուկ կահավորությամբ, սար-  
քավորությամբ, բոլոր անհրաժեշտություններով, ան-

դրածեցաւ և յուրաքանչյուր կաբրիւտում ստեղծել ին-  
կապես տվյալ առարկայի մթնոլորտը, անդրածեցաւ եւ  
դասագրքեր, ձեռնարկներ, հարկավոր եւ գրականություն:  
Բանքակն ուսի միայն յերկու կարիւտը, վոր համենայն  
դեպի լաբորատոր դասարանի չի կարելի վերածել, կա-  
րիւտները - թաւգարաններ են և մասմբ գործնականաշ-  
խատասքների լաբորատորին : Հարկավոր են նաև ուրիշ  
կարինետներ - հասարակագրուական - աշխարհագրական  
մաթեմատիկայի, Լեզուի և այլն : Մի խուզով բենյակներ են  
հարկավոր, սենյակներ, վոր լինեն Բանքակի որամադրու-  
թյան տակ . նրանց համապատասխան ձեզով կահավո-  
րելու և սարքավորելու համար : Ի հարկեւ այդ դեպքում  
դասատուներն եւ ավելի մեծ յեռանդով կ'կաշէն ի-  
րենց աշխատանքին և յերեւ նրանցից շպտերը պյութա-  
կանապես բավարարված լինեն, ամբողջովիկ կ'կաշ-  
էն Բանքակի հետ :

Մեթոդները տարբեր են : Դեռ հնարավոր չե-  
մի հրմական մեթոդ կիրառել և այդ պատճառով յերեւ  
պարագորեք հետեւելու մեկ վորոց մեթոդի՝ դասատուի  
աշխատանքը կ'ուղղու անարդյունավետ և առաջ ԳԵ-  
ԲԵՐԻ անբավարանություն ուսանողության կողմից : Սա-  
կայն կրուառուսուների թարմացումը, աստիճանա-  
բար մոտեցնելը մեկ հրմականի . հնարավոր եւ յերեւ  
զուգընթացաբար ուսումնական պայմանները լավանան :  
Վոյ վոր չի կրուառուսուների դասատունային մեթոդը . մեկ  
տրեկուլը մի քիչ կոգելվորում են այդ ձեզով . բայց պայ-  
տը յըտքուելու եւ նրանց այդ մասին : Յերբեմն Բանքակի  
ասուրական պատճենները պրոցաֆայի կամ այն դաս-  
տուն մի քիչ շեղուելով իր սովորական մեթոդից - յերկու  
յերեւ դաս անց եր կագնուս՝ դասախուուն, բայց մա-

- 58 -

նավանդ տարկա վերօք . դա անսորմաւ յերեւութեա Երայց առաջ եր յեկել Բանֆակի աննպաստ պայման ներից . այդ լինում եր այն ժամանակ յերբ անընպասելի կերպով խլչում եյին որեր . պայ ծրագրային նյութը շատ չկրթատելու համար . դասատուն մի քի ուժեղացնում եր իր դասավանդման տեմպը : Համեմայն դեպի . դա զգույշ եր արկում և կու ի վաս առարկայի : Ո հարկէ առանց թերությունների չի անցել այդ : Բոլոր դասատուներն ել համարյա ամեն որ վորու ժամանակ սկիրուց եյին անցածի կրկնության անհատ կան , ակելի հաճախ ընդհանուր հարցություններով : Կոմանք նոր նյութն անցնելին , անում եյին այդ ուսանողների մասնակցության մեջ՝ մոտավոր հարցերով հարավորության տակի ուսանողության ինքնուրույն լուսարաններու նոր նյութը : Ապա դասատուն ամփոփում եր բուհոր , կորու բաներ ուղղում . լուսադում - և գեց նույն որը - բուրրի կոմ մից նոր նյութը համարյա չուրացված եր : Հայերենից որինակ . գրական աշխատությունների վերլուծությունները կատարվում են մի քայլ համառոտ զեկուցություն և այդ զեկուցությունը լուսաբանում են գարու բազմակուլյան - պիճարանության մասնակցությանը . թե կամ ուսանականը - թե կամ աշխատությանը . թե կամ աշխատանքը - թե կամ աշխատանքայինը . թե կամ աշխատանքայինը : Յերեան լաւ յուրագում : Յերեան գրական նոր նույն եյին գրական դաստի միջոցում . կոր և ան անունը եւ յուրուն եր տակի հարցին :

Ինքերատներ տակու . բանակոր զեկուցություններ տակու մեթոդը հազվագյուտ կեցվերու և սպազմով քայ անցյալ տարի . գեղ կիրառում եւ . նայած զօր այդ մասին բացառական կարքեր հայտնվել հասարական տարկայական համանաժողովով կոմ

մից : Նրա բաց կողմն ամսեւ . վոր նախ հնարավոր չի լինում շյութը սորմալ անցնելու . զարգանում եւ շատակուառայունը լզեկուցումից հետո - մոլքերի փոխանակություն և լինում ) և դասատուն հնարավորություն չի ունենաւ կրսամյակի վերջում . տարկա վերջում միջ պատկերացում ստանալ բոլոր ուսանողների գիտեթքների մասին . ի հարգե նյութը տու ծում եւ . դասատուն ստիպված եւ լինում մեծ պորցիաներով անցնել . վազել առաջ . շատ պահանջել . իսկ դա անպայման ազդում եւ մյուս առարկաների վրա . ուսանող ժամանակի 80%-ը սկիրում եւ հասարակագրական առարկաներին . իսկ մյուս առարկաները պատրաստելու համար ժամանակի միջ եւ ծում և առարկաները տուժումնեն :

Ենդեւ են զեկություր . յերբ դասատուն նյութն անցնում եր դասարանում - դասագիրքը կարդալով - այդ - կարտի յեր վերագրել յերբեմն կրան . վոր դասագիրքը գրածը զբարամարն եր ուսանողության համար . յերբեմն . թերեւն վարամարն եր ուսանողության համար . վոր դասատուն տանը չեր պատմակելի հաճախ նրան , վոր դասատուն տանը չեր պատմակելի հաճախ նրանք բանֆակ գալում . կարողանար կենդանակում , որպեսզի Բանֆակ գալում . կարողանար կենդանակում բնույթով բացատրել դասագրքի անգասկանալի մեջանքի բնույթով բացատրել դասագրքի անգասկանալի մեջանքը : Այդպիս եւ յեշել հասարակագրական վորոց առարկաներից : Եատ եր կաղում թյուրք բաժնի հասարակագրական առարկան դաստի դասատուի անպատճառության պատճենով և որպ հետեւանքով դասատուն հաճախ հակամակառածական ձեւեր եր կրյառում :

Առարկաների մեթոդային կողմը բարեկամելու համար . ու եռ ելի բավական բան կա անելու :

Սուուզման ձեւերն ել միանման չեն . ի հարկե յուրաքանչյուր դասատուն ուսի րր ձեվը և յերբ չա պայական հասնուի եւ գեց այդ եւ գարկապոր եւ : Հունակ ուրաքանչյուր ուսանողուն առանձին - առանձին եւ հարցը

չում և մի քանի անգամ, վոմանք մեղադասի ընթացքում մեկ-  
յերկուսին. բայց միաժամանակ դասարանն եւ հրապրում  
ե մասնակցության. վոմանք եւ զամարյա առեն անգամ  
ամբողջ դասարանն են ստուգում: Հազվագյուտ դեպ-  
քերում-դասատուն ավելի մեծ ուշադրություն է դարձ-  
նում ուժեղների վրա. վոմանք. ընդհանուրական. թույլերի  
հետ ավելի շատ են աշխատում, — յերկու ձեզերն եւ ան-  
ընդունելի յեն, այդ մասին մի քանի անգամ խոսվել եր  
և դրառություններուն պատրի յեն առնված: Կիրառում  
եւ այն ձեզը, յերբ դատավոր է առաջարկում և ուս-  
ողներին իրար ստուգել. ճիշտե. դա շատ աշխուժ է  
անցնում, բայց հաճախ ուսանողների տված հարցեր անձ-  
շան, յերկրորդական լինելով՝ իզուր ժամանակ եւ խում,  
դասատուն ավելի խոայողաբար եւ հարցեր տալիս, ավե-  
լի տեղին. միակ բանը վոր կարող է վերոհիշալ ձեզը մի  
քի լավացնել, դա դասարանի լուրջ դեկազարությունն  
եւ, ուսանողի այս կամ այն ավելորդ հարցերը հանձննեն:

Մեր Բանքակը դեռ կազմակերպչական շրջան է ապ-  
րում, շատ դասարաններ դեռ մի մակարդակի վրա չեն,  
հասկանալի չեն. թե ինչո՞ւ դասարաններն եւ բոլորը չեն  
կարող դեռ մեկ հրանական մեթոդի հանդել. պիտի փոր-  
ձել զանազան կողմերից մոտենալ մի հրանական բանը,  
այս եւ առանց ուսանողին ժամարքելուն հարակ-  
ություն տալ նրան չյուրքը յուրացնելու իրականութեն  
և վու թույր վրա և յուրացնել ըստ հարակորին հենց  
դասարանում, վորովհետեւ ուսանողը հաճախ տանը հը-  
նարավորություն չունի լուրջ պարապելու: Բոլոր դասա-  
տունների կողմից այդ ուղղությամբ մեծ ճրգեր են բար-  
վում. կան հազվագյուտ դասատուններ. վորոնց վերաբեր-  
ությունը մեթոդական կողմին ֆորմալ բնույթ է կրում. այդ-

պիսիներից բաւարակ բանքակը կ'ազատվի:

Հաճախ ամենավայր մեջող խանգարում է շնորհի  
դասարանի բազմամարդության, համապատասխան դա-  
սագրքերի, ուսանողակների պակասության, բացակայության:

Ի հարկե Բանքակի նորմալ մեթոդական աշխատա-  
քին, ուսման գործին խանգարում է այն հանգամանքը.  
Վոր Բանքակը քիչ ունի շտատային, հրանական դասատու-  
ներ: Այդ բանն ազդում է մանավանդ ուսման, ակադե-  
միկ գործի նորմալ ընթացքի վրա, դասատունների ճանա-  
րեռնվաճության շնորհիվ, ուրիշ տեղերում աշխատանք  
ունենալու պատճառով՝ պատահում են բացակայություն-  
ներ կարճատեկ, մեկ յերկու դասատուի կողմից և յերկա-  
րանեկ: Վերջին յերկու տարբա ընթացքում վորոց բայլեր  
այդ ուղղությամբ արկեցին, դուրս մնացին մի շարք դա-  
սատուններ. վոմանք Բանքակին անհամապատասխան լի-  
նելու պատճառով, վոմանք քիչ դաս ունենալու պատճա-  
ռուկ (որինակ՝ յերկու կամ չորս դաս), վորոց չափով հը-  
նուկ (որինակ՝ յերկու կամ չորս դաս), վորոց չափով հը-  
նարավոր յեղակ դասատուններից վոմանց ավելի կա-  
պել Բանքակին:

Այդ ուղղությամբ դեռ պետք է աշխատել: Դեռ  
բոլորովին չեն վերացել մեկ կամ յերկու որպա բացա-  
կայությունները, ուշացումները - առաջին դասերին:  
Դօքախտաբար, չսայած մի բանի նախազգուշացում-  
ների, դասատուններից վոմանք. նախորոք չեյին նախա-  
զգուշացում բացակայության մասին և դրա շնորհիվ  
շատ դժվար եր լինում նույն որը դասերի տեղափոխու-  
թյուններ կատարել: Թեև այդ վորոցումը կատարելուն  
յերբեմն խանգարում ենին զուտ ընտանեկան պայման-  
ներ. բայց մեծ չափով դա հետեւանք անփութության,  
մեր հայկական անպատճանաչության, յեթե իրսու միջոց-

առ առ առ առ առ առ - ի հարկե կ'վերասա: Բարերախտա-  
բար անցյալ տարիների մետ համեմատած - այս տարի  
նկատվում ե վորոշ պրոգրես այդ ուղղությամբ և ա-  
զատ դաստուները հաճախ, առ այս վարձատրության  
պահանջու, փոխարինում են բացակայող դաս-  
տունի:

Դաստուն Բանֆակի հետ կապվել կ'կարողանա-  
միայն այն դեպքում, յերե բավականաչափ ապահովված  
լինի. դժվար մասնական համալսարան, դաստուներին  
միմիայն Բանֆակի կապել, նախ. Բանֆակը համալսարակի  
մասն ե, իսկ յերկրորդ համալսարանը ցի ցանկանա. յեր-  
րորդ դաստունի համար պյութականապես անպատ ե,  
իսկ ամենագլուխապոր - գասատուն յերե մասց միմիայն հա-  
մալսարանում, հանվեց Բանֆակից - առպատման Բանֆակը  
լուսություն: Հունի համալսարանական վորև ե վոչ շտատային  
դաստունի և դրա փոխարեն հրամիրել պատահական. Բան-  
ֆակի համար ահետամապատասխան դաստուն - անպայման  
ցանկամի չե: Բանֆակի հարկավոր եւ լուրջ պատրաստա-  
կանությամբ, բարեխրու և Բանֆակը պիրու դաստուներ:

Այս հարցը Բանֆակի լուրջ ցանկերից մեկն ե, բայց  
դրա ըստման շատ զգուշ պետք ե մոտենալ: Շտատային  
դաստուների յետեղից ըսկնելով՝ հանկարծ ըզրկվենք լուրջ,  
բարեխրու. Վոչ շտատային դաստուներից:

Գնայած վորոշ թերությունների, վորոնք հայտնվում  
են և կ'հայտնվեն, կարելի յե ասել. Վոր դաստուների  
վերաբերմունք, ընդհանրապես Բանֆակի աշխատանքնե-  
րին տարեց տարի ավելի լուսանում ե. սրանց մասնակ-  
ցությունը Բանֆակի կյանքին ավելի ակտիվ դառնուու:  
Դուն գա յերեկում ե այս մեծ աշխատանքից, վոր կատա-  
զում ե առարկայական հանձնաժողովներում: Կարելի յե

դամարձակ կերպով ասել, վոր հանձնաժողովների նիստերի  
հանձնախման նկատմամբ դաստուները վերին աստիճանի ու-  
շադիր են և բարեխրու. ի հարկե նկատի շառնելով բացառու-  
թունները: Յեւ այդ՝ չնայած նրան, վոր նիստերը կայանուց  
ենին 5-րդ, հաճախ 6-րդ դասից հետո, այս ե՝ ժամը 9½-ից  
և շարունակվում մինչև 11. յերբեն 12-ը: Այս ուսումնա-  
կան տարրում նիստեր ավելի շատ յեղան, ավելի յերուն  
աշխատանք տարպեց:

Մի բացասական գիտ չպիտի հանեկել: Կան դաստու-  
ներ, վորոնք վոչ թե դիտմամբ, գիտակցաբար, այս ըստ սո-  
վորության, դեռ շարունակում են ուսանողի վրա նայել.  
Վորպես աշակերտի: Ճիշտ ե, ուսանողն իր անցած նյութինը  
կատմամբ: Տավասար ե աշակերտի, բայց իր վերաբերմունքու  
գործին, բոլորովին այլ բնույթը ունի, իր կեռսափան փոր-  
ձառությամբ բարձր ե աշակերտից, իր տնտեսական ուրու-  
թյամբ - գտնվում ե բոլորովին ուրույն պայմաններում:  
Աշակերտի տեղ դնել նրան յերբեք ցի կարելի: Բանից աս-  
վել ե և դա ունեցել ե իր արդյունքը, բայց գեր բացա-  
ռիկ դեպքեր կան և ապա պետք ե ենի արձանագրել: Յեր-  
բան անտեսի հեգնական նկատողություններ, բարձրա-  
ծայն հաւատած դժգոհություններ, նուսանատեցնող ըստը  
նաև իրենքներ (թե - "միեւնույն ե թույլ են", հույս չկա", կամ պիտի  
կտրվեն քննության ժամանակ" և այլ այսպիսի խոսքեր),  
յերկու, յերեք հարցուներ տալով, նստեցնել, առանց մատա-  
կոր հարցեր տալով: Անցյալ տարի այդ զգակի ցավ եր, այս  
տարի հազվագյուտ բան, հույս կա, վոր հետզհետե բոլո-  
րովուն կ'վերանա: Ի հարկե այդպիսի միալսեր անխու-  
սափելու յեւ և այդ մասին միշտ պիտի խոսվի, մինչև վոր.  
այդ, յերեւույթը վերանա: Տագավազյուտ դեպքեր են բայց

Դասատուներից վոմանք չեն բավականակում դասա-  
րանացին պարապմունքներով. առարկան ավելի խորացը.  
Նելու համար կազմակերպել են արտադասարանային գործ  
նական աշխատանքներ, ուեկավարել կամ ֆառանգեցնել ա-  
կադեմիկ առարկայական խմբակներ, կազմակերպել երա-  
կուրիաներ, դասախոսություններ կարդացել բանվորա-  
կան ակումբներում: Կար բնագիտական, գրական խմբակ,  
ուժբախտաբար մեր գգալի բացերիցն են այն. Վոր հասարա-  
կագիտական (որին մարդկութական) խմբակներին չեն մաս  
նակագել դասատուները, ուսանողությունը մենակ մնալով  
անկարող եր կենդանություն. աշխատություն տալ ո  
նեցած խմբակներ:

Եթեր պարզում եր այս կամ այս առարկայի բացը,  
ավելի պատրաստված դասառուներն իրենց ցուցմունք-  
ներով ոգուու եյին ընկերներին: Մանավանդ մեծ բաց եր  
նկատմում թյուրք բաժնի հասարակագիտական առարկա-  
յի նկատմամբ: Առարեալութեան հաճախատողությունը նայակա-  
նը ընդառաջ գնալով ուսանողության, ուսումնական մա-  
սի համաձայնությամբ կիրակի որերը լրացուցիչ դասերով  
մի քիչ ծածկեց ուսանողների լուրջ բացերը: Ազարտական  
կուրերի մաթեմատիկայի և Հասարակագիտության ու-  
սառությունը բավական ժամանակ սվիրեցին ուսանողն-  
երուն բնություներին նախապատրաստելուն:

Դուսաց լեզով դասառուներից վոմանք արտադա-  
րանային ժամեր եյին նվիրել թույլ ուսանողներին  
մի քիչ ուժեղացնելու նպատակով: Դուսաց լեզով առար-  
կայական հանձնաժողովը կազմակերպեց նաև մի ու-  
րեկույթ նվերացած Նեկրասովի մահվան հրանմայակին.  
Եթեան զեկուցությունը ուսանողության թե դասառութ-  
յունը. ուսանողության կողմից արտասանություններ,

Եթեկույթը հազոր անցավ:

Դասառուների (հայոց, Ռուսաց լեզուներ և մեկ հա-  
սարակագետի) աշխատավորն պիտի վերագրել նաև Մաց-  
սիմ Գորկուն նվիրված միացյալ յերեկույթի կազմակեր-  
պությունը: Դասառուների և ուսանողության զանքե-  
րով կազմակերպված հետաքրքիր յերեկույթը բավական  
հազոր անցավ: Այս յերեկույթը կազմակերպվեց Խոդուսոր.  
Տեղական կամ միասին:

Մեր Բանքակի պայմանները չեն նպաստում այդպիսի  
աշխատանքների ըստարձակման. Բանքակօ չունի դահլիճ իր  
բեմով. վերոհիշյալ յերեկույթի համար դատինը հարկաց-  
վեց փողով. ուս իհարկե անորմալ բան ե, ամեն անզան  
փող վճարել - շատ գգալի կ'իսի մեր բյուջեյի համար: Իսկ  
նման ընդհանուր հանդեսներ, յերբեմն զեկուցութեր. զա-  
սարնոսություններ չանելը - մեծ բաց ե մեզ համար:

### Ուսանողության վերաբերմունքը ուսումնական աշխատանքին

Մի քանի անգամ ասկել ու գրվել ե, վոր մեր ուսա-  
նողությունը ուսումնական տեսակետից գտնվում է ան-  
դրական պայմաններում: Եալ ծանր են առհասարակ յե-  
րեկոյան պարապմունքները և մանավանդ նրանց համար.  
Վորոնք յերկար ժամեր գրաքանակն աշխատանք ունեն.  
լուց հետո, նոգած, յերբեմն լավ ընաշած, գալիս են բա-  
րձակ: Հարված, նոգած ուղեղները դժվարությամբ եյին յր-  
ուցնում անցածը: Ժամը 9-ին, 10-ին վերադառնում են ուսա-  
նությունը հանգստանան, նոգած ինչպես պատրաստվեն: Պարսի  
մոռակալ նաև. վոր դասագրքերի մեծ բաց ե զգացվում:  
Մատչելի ձեռնարկների, ուսանողակաների, գրականության

պակասություն: Մի խոսքով ուսմանակիր աշխատանք: Առաջեց և ամեն միջոց ձեռք առնել, թեթեղացնելու ուսանողության պայմանները, աշխատանքի ժամերը կրծատել, ոյուրացնել, մատչելի դարձնել ուսմաղակների ձեռք բերելու և գրանից տեսող պվեսի բարեր արդյունքներ կ'ստացվեն: Չպիտի ծածել, Ել ազեմ ծանր պայմաններուն են գումարմ կուսակցականները, կոմյերին ները: Նրանք շատ ու շատ են ծանրաբեռնված հասարական աշխատանքով: Ճիշտ է, որանք, մանավանդ համակիր ուսանողությունը, չեն կարող ըորվել հասարական աշխատանքից, բայց ուժից չեն կանց ծանրաբեռնել նպատակատիրակար չեն: Բայց այս պահանջվում է ուսանողին ակադեմիապես լուրջ կերպով պատրաստել, վոր պես նա կարողանա ձեռք բերված գրտեղիքները կայ քում ոգտագործել, և մանավանդ կարողանա առանց դժվարությաների աշխատել բարձրագույն դպրոցներում: Նկատված են մեզ մոտ զգայի բացակայություն կեր, մանավանդ հասֆակի ուսանողության կողմից և մեր հասֆակներն ակադեմիապես ցած են, պատճառը չու թե հասֆակի ուսանողի անընդունակությունն եալ ծայրագեղ ծանրաբեռնվածությունը հասարակական աշխատանքով և դրանից եւ առաջ յեկած բազմաթիւ բացակայությունները: Դրասատուների անցածը մեծ մասմբ յուրացվում է հենց դասարանում, ուրեմն ամեն մի բացակայություն վորոց ակադեմիական բաց և ուսանողի համար և յերե դասագիրք եւ չկա, այդ բացը շատ դժվար է ծածել:

Համեսնայն դեպս Բանֆակն իր շահերը չի կարող գոցել այն պայմաններին, վորոնց վերացնելու Բանֆակից չի կախված: Ուսանողության աշխատանքը թեթեղա-

ցնելու համար ուսումնական մասն անում ե այն ամենն, ինչ վոր համապարբ և ինչ վոր չի խանգարում ակադեմիական աշխատանքին: Ուսանողությունն այժմ գիտակցում է, վոր անցած առարկան, անկախ այս բանից թերին պայմաններուն ե ինքը գտնվում, իրանից պիտի պահանջները և այս պիտի կատարի: Անպատճառս ուսանողը, ակադեմիապես թույլ ուսանողն այժմ գիտե, վոր նման պայմանները չեն կարող արդարացնել իր ակադեմիական հետամացությունը, չա պիտի համակերպի, յեթե դժվար ե: Ապա ուրեմն, պիտի թողնի Բանֆակն ու տեղ տա մինչեւ սկսերին, վորովք, չնայած կողմնակի աշխատանքներով ծանրաբեռնված լինելուն, այսուամենայնիվ հազորությամբ կատարում եւ Բանֆակի բոլոր պահանջները, և հաջողակությունն կուրսից կուրս: Անցակ այս մամանակը, յերբ կոմյերի տականու կարելամ եր թե տես կոմյերին ինելու համար, որանից իրավունք չունեն պահանջներու այլ քան, վորքան մյուսներից: Այդ նորի վրա անցյալներում հաճախ երին պատահում անախորժություններ, այս ու չկա: Ուսանողն արդեն լավ գիտակցում է, վոր Բանֆակը բարեգործական գիտնարկ չե, գիտե, վոր Բանֆակը պիտի օնտրություն անի թույլ և ընդունակ բանվորներ, ընտրի, պահի-յերերորդներին և ամեն կերպ սրանց աշխատանքը թեթեղացնի, առանց վասելու ուսումնական պահանջներին:

Ուսանողության վերաբերմունքն աշխատանքին պվեսի լրջացել է, մեր հայկական „մի կերպ“ի վրա նույն դնելը վերացել է, վերացել և այս յերեւույթը, յերբ այս կամ այս ուսանողը զանազան „պրոտեկտիոն“ գրություններով՝ եր վորձում ազդել ուսումնական պահանջների վրա: Բարեբախտաբար „պրոտեկտիոն“ գրությունները”

տվող տրմարկները, անշանավորություններն եւ հասկացնեց  
այդ յերեվուայքի զասակարությունը: Ըստանողությունն այ-  
պաման մեծ աշխատանք է տանում և բավական ծանր,  
յօրեւ նա լիներ սովորական դպրոցականի պայմաններում: —  
արդյունքները շատ մեծ կ'ինեյին: Կա նրանց մեջ սեր գե-  
պի Բանֆակը, աշխատանքը: յուրաքանչյուրը գրտակցուց  
է, վոր սեփական ուժերի վրա պիտի զստացան և հույ-  
սուր այն բանի վրա, թե նրան "մի կերպ" առաջ կ'ուանեն:  
Պետք է շեշտել: Վոր մեր ուսանողության ուսման  
տեսչը շատ մեծ է, հետաքրքրությունը նմանապես, քայլ  
նրանց աշխատանքի պայմանները - ծանր, մեծ տոկուսու-  
թյուն պահանջող, Վորքան վոր լավագան Բանֆակը ուսում-  
նական պայմանները, այսքան ավելի կ'թեթեվանաշ նրանց  
աշխատանքը, ապա առդյունքներն եւ մեծ կ'ինեն:

Բանձակի ուսումնական ոժանդակելոր  
1923-24 թվան ձեռք չեւ բերվել ուսումնական չըս  
մի ոժանդակ: Դեռ 1924-25 ուս. տարվան Բանֆակի տե-  
ղեագիրը շետում է, զոր Բանֆակն ուներ 350-400գիրը  
Վորոնց մեծ մասը Բանֆակի գատուկ միջոցներով եւ ձեռք  
բերված, անկանոն մնում եիր, առանց ցուցակագրվելու  
և ի հարկեց գրքերից ոգտվող չեր լինում: Ուսանողությունն  
ոգտվում եր օճախարարոց և յերբ Բանֆակը տեղափոր-  
կեց Կուլտուրայի Տուն: Բանգարան գնալը բավական ան-  
արդյունավետ ժամանակ եր խում: 1925-26 թվից ոժանդակ-  
ների վրա լուրջ ուշադրություն դարձվեց, Բանֆակն ըս-  
կրսեց մնածել սեփական ոժանդակներ, կարիստներ ունե-  
պալու մասին: Յերեք տարվան ըսթացքում Բանֆակը կազ-  
մակերպեց այն ինչից շատ և շատ դպրոցներ գրկած եւ:

Այսուհետական տարրում հետեւյալն ենք տեսնում։  
Բանֆակն ուսի Ֆիզիկո-քիմիական կարիստու, բնագր-  
տական կարիստու, գրադարան ըսթերցարան, գեղագրական  
սենյակ։

Բնագրուական կաբինետի հիմքը դրվեց 1926-27 ու.  
տարում: Մինչև 1925-26 թիվը՝ Բանֆակի բնագրուական  
ուսուդակներն եյին 30 հատ նկարներ և ել վաշինչ, չույսինչ  
մի հասարակ մթկրուսկուց ել լկար: 1925-26 թվին Լուսաժ-  
կումի ազակցությամբ ձեռք է բերվում մեկ հատ լավ մթ-  
կրուսկուց: Յեզ այսուհետև յուրաքանչյուր տարի նորանոր  
գնումներ եյին արվում: Ի հարկե վոճրագործություն եր գրե-  
նական բնույթ կրող առարկան անցնու առանց գործնական  
ուսուդակների, թանգարանից ոգտվելը շատ սահմանափակ  
եր, աննպատակահարմար և զօնարին մեր յերեկոյան պարապ-  
մունքների համար:

Այսմ, յերրորդ տարվա վերջը Բանֆակի բնագիտական  
կաքինետը՝ այսպիսի գրության մեջ Ե գտնվում, վոր Դաս-  
տուները Կարող են բավարարվել Բանֆակի կաքինետով (ը-  
ստ Վորոշ Խօսնակներից). Նույնիսկ Տնարավոր գարձաւոր-  
նական աշխատանքներ կազմներպել:

Այս Բանքակն ունի Յաւա շատ լավ միկրոսկոպ, 2 տառ  
հասարակ (սրանք սկզբ են ստացված Ռազմական Դպրոցից)։  
Վորից մեկը հասարակ է, մրայն եքսկուրսիաների ժամանակ  
կարելի յէ ոգտագործել, մեկ հատ եւ ձեռք եքերված Բու-  
զաստանից, բայց բարձր վորակի չե։ Համենայն դեպս 5 միկ-  
րոսկոպի պրա կառելի յէ աշխատել։ Կան բավականաշատի կեռ-  
դանաբանական ոճանդակներ՝ սպիրոնի մեջ, կմախըներ,  
նիփոներ, բուսաբանական-նիփոներ, ճաղիկների մողենըներ,  
մարդակազմական - նկարներ, մուլաժներ, կմախք, լեռնային  
տեսակներ, հանքերի հավաքածուներ, տերևնուղթիական կո-

Ենքիաներ, նկարներ, ապակեղեն - ֆիզիոլոգիական և ուրիշ բորբոքի համար, աղոմանառական 5 կրծկված անցրածեղու պարագաների: Զգալի չափով կարինեոք լուսացնեց վակված թագմական դպրոցի ուսանողականերուն:

Կա եպիգրուսկու - անթափանցիկ նկարներ ջուցա- դունու համար և մոգական լապտեր (այս տարի ձեռք բերված այս յերկու ուսանողակաները ձեռք են բերված քոյլոր տար կաների ոգուազորման համար):

Ի հարեւ դեռ եմ շատ բան կա ձեռք բերելու: Մի- կուսկոպների քանակը անպայման պիտի հասցնել մինչև 10-ի. այդ դեպքում համարակոր կ'ինի ավելի շատ աշխա- տանքներ կատարել:

Թագմական գուրուցից ստացված ուսանողականերից հանքակն առանձին հավաքածուներ կազմելով նվիրեց միքա- րի դպրոցների: Այդ մասին կ'ամենք հետո:

Կարինեու ուսի անցրածեցու սարքավորումն թե կարինեումին և թե գործնականի համար, մեծ կարիք է ըգ- գացվում պահարանների:

### Ֆիզիկո-ֆիմիական կարիքներ

Մինչև 1925-26 ուս. տարին. Բանքակի ֆիզիկո-ֆի-

միական ուսանողակաները յերկու պահարանների մեջ եին: Ձե- կար առանձին սենյակ: Ուսանողակաները չնցին եին, դասա- տունները մեծ մասմբ զնում եին թանգարան: Անցյալ ուսումնական տարրում հատկացվեց մի սենյակ: Վորոյ ոգ- արվում եր և Տերնիկումը. այս տարրվածից այժ սենյա- կից ոգուվում է միմիւյն բանքակը: Յերեք տարրված- թացքում զգալիորեն հարստացավ ֆիզիկո-ֆիմիական կարինեու: Նվեր ստացանք Համալսարանից. Թագմա- կան գուրուցից (այս դպրոցից մասնավոր ստացվածը բա- նավագործ որինակներից

վական հարստացրեց մեր ֆիզիքական կաբինետը): Մոր ուսանողականեր ձեռք եին բերվում յուրաքանչյուր տարի Մու- կայից, Լենինգրադից, պատվեր է տրված նաև արտա- սահման: Այժմ ֆիզիքական իրերը դարսված են չորս պա- հարանում, դեռ մի այդքան պահարանների եւ կարիք կա. Վորովցեան կան իրեր սեղանների և պահարա- ների վրա հաստատված: Ճիշտ է, դեռ եին շատ բան կա ձեռք բերելու և այդ ուղղությամբ պիտի աշխատի Բան- ֆակը. համենայն դեպք այս տարվանից հասրավոր յեղակ վորոշ գործնական աշխատանքներ կազմակերպել նաև ֆիզիկայից - ըորորոք և յերրորդ կուրսերի համար: Ֆիզի- քական ավելորդ իրերից ևս հավաքածուներ կազմո- ւեցին և բաշխվեցին մի քանի դպրոցների:

Քիմիական առանձին կաբինետ չկա. Նրա պահարան- ները (յերեք) և լաբորատոր սեղանները ֆիզիքականի հետ մեկ սենյակում են: Լաբորատոր սեղանների վրա կարող են աշ- խատել մինչև 16 հոգի: Բավականացած կա ապակեղեն. առ- թեղեն վոզ միայն դասարանային փորձերի, այլ և ուսանող- ների գործնական աշխատանքների համար: Այս տարի յե- ղան գործնական աշխատանքներ և քիմիայից:

Մի բան անորումալ է: Ֆիզիկո-ֆիմիական կարինեո- ներն այսքան են ընդարձակվել, վոր արդեն իսանգարում են իրար: Ֆիզիկան քիմիայից պետք է զատել. Ֆիզիկա- նոցում քիմիայից գործնական աշխատանքներ կատարել անհնար ե. Վորովցեան ֆիզիքական պրիբորները վորոշ սյուրերից կարող են զնակել: Սենյակը կուտակված է ուսանողականերով, կահավորությունով. դա հնարավորու- թյուն չի տանի թե գործնական աշխատանքներն ըն- դարձակվելու և թե դասը լաբորատոր մեթոդով ան- կացնելու: Յերկու առարկաներն եւ քանի գնան պիտի ըն-

դարձակվեծ, ազա ուրեմ անհրաժեշտ և յուրաքանչյուր կա  
ընթառին հատկացնել առանձին սեպակ:

### Գծագրական սեպակ

Մինչև 1925-26 ու. տ. Բանֆակի գծագրության  
դասերն անսորման կիր գնում, թե ինչպես են գեղում զա-  
սարանում-շատ դժվար և պատկերացնել: 1926. 27 ու. տ.  
միջանցքում տախտակներով սեպակ կարգեց, գնվեցին  
գծագրական սեղաններ, տախտակներ և մի քիչ կանոնա-  
վորվեց գծագրությունը. բայց ճամանակակոր բան օր  
դա. միջանցքում գեղեց շատ անհարմար եր, վասակար-  
առողջապահական տեսակետից: Այս ուսումն, տարում  
պայմանները լավացան: Հատկացվեց մի առանձին սե-  
յակ, վոր գլուխութեա ծառայում եր գծագրական  
աշխատանքների համար: Զեր-ոճառ գործարանից նվազ  
ստացանք հին մեքենաները մասեր և գնվեցին ուժից գր-  
անքական ոճանգակներ: Միակ անհարմարությունը մե-  
ջեր դոք միեւն է: Այդ սեպակից միամանակ ոգ-  
տրվում են և ուրիշ կարիքների համար. այդտեղ են ընկա-  
զական իրեր (գիպսի մողելների) պատճեռ (չիս առանձին  
պահարան). այդտեղ են կատարվում բարեխական-ցերեկ-  
կա գործնական աշխատանքները միկրոսկոպով. այդտեղ  
և պակետիպի արխիվ. Ենց այդտեղ ել տպագրվում են  
Բանֆակի հրատարակությունները. այդ սեպակում են  
ցերեկներն ուսանողները գալիք ազալ ժամերին գծելու.  
լինում են ուսումնական բայություն նիստեր, յերբեմն կըր-  
սողական դասեր և զանակ ուսանողության այս գամայն  
խմբի կրկնողական կուլտուրից պարապմունքները: Մի  
խորով այդ սեպակի դեռ ևս ունիվերսալ աշխատանքնե-  
րի յե ծառայում: Գրանից յերեցում են վորքան մեծ

կարիք կա նոր սեպակների:

1925-26 ու. տարվանից յուրաքանչյուր տարի ձեռք  
ելին բերվում բույր առարկաների համար անհրաժեշտ ուսու-  
մակներ և դրա շնորհիվ դասավանդությունն ավելի աշխո-  
ժանում եր և թերթեպանում:

Աշխարհագրությունից այս յերեք տարվա ըսթացքում  
և մանականդ այս ուսումնական տարում ձեռք են բերված  
բազականացափ պատի աշխարհագրական քարտեզներ,  
ուսանողների ոգտագործության համար տետր-քարտե-  
չեր (ատլասներ), վորոնց շնորհիվ ուսանողության հարա-  
վորություն տրվեց միշտ քարտեզն իր առաջ ունենալ:  
Գնված են բազականացափ դիագրամներ. ըսդհանուր աշ-  
խարհագրության նկարներ:

Բանֆակն ուսի քարտեզներ մոտ 44 հատ, նկարներ  
մինչև 130 հատ (ընդհանուր աշխարհագրական և տնտես-  
կան), ատլասներ 25 հատ, սովորական և սեվ գլոբուս, որ-  
լուրի: Ռազմական գյորոցից նվեր ստացվեց տրվուրի. ու  
փոքր օլոբուս, կողմացույց և բազական թվով հին հրատա-  
րակության ատլասներ, վորհից մի մասը Բանֆակն իր կող-  
մից նվիրեց մի շարք գյորոցների:

Հասարակագիւռությունից ձեռք են բերված դրա-  
գրամներ, դիացոգիւրներ, գլոբուս: Այս տարվա սկզբում  
ուսումնական մասն արդեն նոտադիր եր կազմակերպել  
հասարակագիւռության-աշխարհագրական կարիքներ և դա-  
շարավոր կլինիտ, յեթե մեր շենքի ցերեկվաշ յերկու ազալ  
դասարանները չհատկացվելին սկզբում Կոռպաթրատիվ  
Տեխնիկումին, ապա Գյուղղատնտեսականին: Ակքրում ա-  
զալ եր, թե դա կիսր ճամանակավորապես, բայց իրա-  
պես ամբողջ տարին անցավ և Բանֆակը չկարողացավ

հակառակ իր ցանկության, կազմակերպել հասարակագութական կաբինետ։ Համեմայն դեպս այդ կաբինետի կազմակերպելն առաջնաժամկետ հարցերից մեկն է։ Կորոշ գումար արդեն հատկացված ե գրականություն ձեռք բերելու համար (մի մասը ձեռք ե բերված), ամառվա ընթացքում այդ գնումները քարվեն և տես վոր տրամադրվեց Բանքին առանձին սենյակ-կաբինետը կ'կազմակերպվի անմիջապես։

Հայոց լեզվի, լուսաց լեզվի համար պահանջված ոմանդակները, գրականությունը միշտ ձեռք եր բերվում ե այս տարի ել բավականաչափ գնումներ յեղան։

Ձեռք բերվեցին այս տարի նաև մատեմատիքական ոմանդակներ, լերկրաչափական մարմինների մոդելներ։

Երիշ չափով, կարելի յէ ասել, բավարարված ե նաև նկարչությունը։ Անցյալներում նկատված՝ նկարչական ուսուող փախստականների պատճառներից մեկն ել այս երկու հայպես իրենք են ասում, շատ հաճախ միկոնոյն կուտրը. իրերն երին նկարում և տաղանակի յեր անցնում դասը։ Այժմ կան բազմաթիվ գիպսի լազ մոդելներ և հրման արդեն «փախուստը» պատճառաբանվու առիթ շնչա, մոտիւ և միայն, վոր ուսանողներն ավելի սիրեն և լուրջ վերաբերուն այդ անհրաժեշտ առարկային։

Բյուրքական բաժնի շահերն անտես չեն արվել։ Ըույնում յեղած անհրաժեշտ գրքերը ձեռք երին բերվում են ձեռք կ'բերեր Բանքակը, յեթե գրականություն միներ։ Քայլի անգամ գրվել ե Բագու, Ասրբեցանի Պետրաստին՝ ցուցաներուղարկելու համար։ Բայց դիմումներն անհետեվանք են մնացել։ Կորոշ գումար հատկացվում ե այս տարվա գլուխների համար։

### Գրադարան-ընթերցարան

Իունոր առարկաներին վորպես ոճանդակ ծառայալմ է Բանքակի գրադարան-ընթերցարանը։ Մինչև 1925-26 թիվը գրքերը ցուցակագրված չեին, ըսկած երին գրասենյակին պահարաններից մեկում։ Գրքերի քանակն եր 350-400, Առողջ թվում կային բավականաչափ հնացած, անպեսք գրքեր։ Յեղած պետքական գրքերը ցուցակագրվեցին, գնվեցին պահարաններ։ Խուստողկոմատը (նախանցյալ տարի) հնարակություն ովեց միանվագ 1000 ո. գրականություն ստանալ Պետրատից։ Հանրային Մատենադարանից ել ստացանք բավականաչափ գրքեր, ապա ուսումնական գումարներից յուրաքանչյուր տարի վորոշ գումար եր հատկացվում տար-բեր առարկաների կարիքների համար։ Թե այստեղ և թե Սուկվայում ձեռք եր բերվում անհրաժեշտ գրականություն ուսուանողի և դասատուի համար։ Այս ուսումնական տարում բավական գրքեր նվեր ստացանք կակված Պազմական դպրոցից։ Անցյալ ուսումնական տարում թե առանձին սենյակ չկար, բայց գրադարանն այնքան կանոնավորվեց, վոր արդեն գրքեր երին բաց թողնվում թե ուսանողներին թե դասատուներին։ Պահարանները ուսուցանողներին թե դասատուներին։

Գրադարանից ոգտվում են նաև դասատուները։

Այս տարի յերկրորդ կիսամյակի վերջը կազմակերպվեց հատուկ գրադարանային հանձնամոռով, վորը պիտի ավելի կանոնավոր ուսանողության ընթերցանությունը և

տերեօն հայուկ մասնագիտական կոնսուլտացիաներ նո-  
շանակի-ու պահովելով համար գրույցներ տվյալ մասնա-  
գիության նկատմամբ մեր գրադարանում յեղած գրակա-  
նության մասին :

Հաջորդ ուսումնական տարվանից մայդ ուղղողությունը  
աշխատանք պիտի սկսի հենց տարվա սկզբից:

Հաջորդ ուսումնական տարվանից առդեն մեր գրադարան  
նո կանցնի քարտային սրմատեմի, մինչև այսօд չի արվել  
գրեթե քիչ լինելու պատճառով:

Գրադարանա ունի հինգ բաժին . գրքերի քանակն է  
ըստամեր 4132.

I Բաժ. Գակառություն . գրքերի քանակը . հայերեն 852. ռուս. 723

II " Անգ-տնտեսական, տնտեսական  
" պատճակն 240 " 620

III " Յեղիկ-մատեմատիքական,  
Տեսագրություն, Տեխնիկ " 75 " 422

IV " Բնագիտական, աշխարհագրական  
Քիմիա \*\*" 266 " 560

V " Ընդհանուր  
" 133 " 276

Այս տարի ավելացել են մոտ 1600 գիրք, Կորից 830 ըս-  
տացել ենք նվեր փակված Ռազմական Դպրոցից, 294-Կենտ.  
Կոմից, իսկ մնացածը ձեռք են բերված ուսումնական միջոց-  
ներով :

Դասատուները Վերցրել են 225 գիրք :

Առաջնային մեծ չափով ուղարկվել են և Պատ-  
միներից, Վորոնցից բավականաշատ գրքեր կան հայուս-  
ւեզով : Մյուս բաժինների մեջ մասը ուղարկեն գրեթե են,  
շուկայում քիչ կան հայերեն գրքեր, այդ պատճառով, քիչ  
են կարգացվել, Վորոնցեան ուղարկեն լեզուն դեռ շատ-  
շատերին այնքան եւ մատչելի չեն :

Այս տարի թաւորք ուսանողությունը ևս մեծ 96-

\* Կատա գերմաներեն և գերմաներեն

տարրքություն զույց տվեց . բայց սակավաթիվ թուր-  
քերին գրքերից՝ նրանք կարդում ենին հայերեն և ուղ-  
ներեն գրեթեր:

Կուրս	Ոգութեան քառամեր	Կարգացել են գիրք ուղարկեն	Հայերեն	Ուղարկեն	Բանառու մեղքուած գրեթեր ուղարկեն	Բանառու մեղքուած գրեթեր ուղարկեն
I ա.	24	294	281	13	42	1
I թ.	29	218	213	5	29	1
II հասֆ.	19	90	73	17	23	1
II Տեխն.	30	408	359	49	45	1
III հասֆ.	18	72	50	22	9	1
III Տեխն.	31	298	251	47	37	1
IV հասֆ	28	312	256	56	28	1
IV Տեխն.	31	343	285	58	46	1
I թրք.	7	14				
III "	21	96				
IV "	5	26				

Այսագրեթե շատ կարդում ենին „Սուրբ“ „Գործ“ իր  
նորություն „Առք“, „Յերիտասարդ Բուշեպիկ“, „Օգոնյէ“ Գը-  
րական դիրքերում” :

Այս տարի աշակողության և դասատուների հա-  
